ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

<<25>> մարտի 2015 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է՝ **Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ Ռ.Ժ.Սանոյանը**

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝ **Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռ.Ասատրյանը**

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝ **Գյումրի համայնքի ավագանու անդամներ՝**

Ա. Ադամյան Գ. Ադամյան Ա. Բաղրամյան Մ.Գաբոյան Ա.Գրիգորյան Վ.Եդիգարյան Գ.Թաթարյան Հ. Խաչատրյան Տ.Հովհաննիսյան Վ. Հունանյան Ն.Մեսրոպյան Ռ.Մխիթարյան Վ.Շիրինյան Մ. Սահակյան Տ. Փանոսյան

ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝ Համայնքի ղեկավարի խորհրդականներ՝ Ա.Բալաբեկյանը, Վ.Սուքիասյանը, Ա.Մովսեսյանը, Հ.Սարգսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի՝ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանը, բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Կ.Մանասյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետ Ա.Հակոբյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանը, ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի պետ Ս.Ղազարյանը, կրթության բաժնի պետ Հ.Սուլթանյանը, ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ.Ղազարյանը, համայնքային գույքի հաշվառման և կառավարման բաժնի պետ Ա.Դավթյանը, վերահսկողության բաժնի պետ Ա.Համբարձումյանը, բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ս.Մինասյանը, գովազդի բաժնի պետ Հ.Թադևոսյանը, իրավաբանական ապահովման բաժնի պետի ժ/պ Ա.Գրիգորյանը, ծրագրերի, արտաքին կապերի և արարողակարգի բաժնի պետ Ա. Հովհաննիսյանը, տրանսպորտի բաժնի պետ Ա. Եղոյանը, ներքին աուդիտի բաժնի պետ Կ. Խաչատրյանը:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ՝

ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, ՀԿ-ներ (ցուցակը կցվում է)

ԼՍԵՑԻՆ.

1. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալ Ռ.Սանոյանը ներկայացրեց ավագանու նիստի օրակարգը:

Ավագանու անդամ Արամայիս Բաղրամյանը առաջարկեց օրակարգի նախագծից հանել 17-րդ հարցը. «Ես առաջարկում եմ օրակարգի նախագծից հանել ՀՀ նախագահին ուղղված ուղերձի ընդունման վերաբերյալ հարցը, քանի որ նախորդ ավագանու նիստի ժամանակ ավագանու անդամները այդ հարցի վերաբերյալ արտահայտել են իրենց դիրքորոշումը: Հիմա նորից հարցը ընդգրկել օրակարգ համարում եմ ավելորդ և անիմաստ»:

Ավագանու անդամ Լևոն Բարսեղյանը պնդեց, որպեսզի հարցը, այնուամենայնիվ, ընդգրկվի օրակարգ: Օրակարգի նախագծի 17-րդ հարցը հանելու վերաբերյալ Ա. Բաղրամյանի առաջարկը դրվեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 1 (Լևոն Բարսեղյան)
ձեռնպահ – 1 (Վահան Հունանյան)

Քվեարկությունից հետո Լ. Բարսեղյանը հեռացավ ավագանու նիստից: Նիստը շարունակվեց ավագանու թվով 15 անդամների մասնակցությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի մարտի 25-ի հերթական նիստի օրակարգը առանց 17-րդ հարցի ընդգրկման՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N184-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Մ. ՃԱՐՏԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ծրագրերի, արտաքին կապերի և արարողակարգի բաժնի պետի տեղակալ Մ.Ճարտարյանին:

Մ.Ճարտարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 15
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի «Գյումրի համայնքի քառամյա զարգացման (2013-2016 թվականների) ծրագիրը հաստատելու մասին» N184-Ա որոշման 20-րդ գլխի 8-15-րդ աղյուսակներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 205-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ՍԱՆՈՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 15
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2015թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 205-Ն որոշմամբ հաստատված Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 1-ին, 2-րդ և 3-րդ հատվածներում կատարել փոփոխություններ՝ շարադրելով նոր խմբագրությամբ, համաձայն համապատասխանաբար՝ NN 1-ին, 2-րդ,3-րդ հավելվածների:
2. Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 89.006.000(ութսունինը միլիոն վեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ ուղղել 2015 թվականի բյուջեի վարչական մասի 4/5/1 գործառական դասակարգման (4251) «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածին ՝ ըստ բյուջեով հաստատված համապատասխան եռամսյակների:
3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ կատարել համապատասխան փոփոխությունները օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ՆԱՐԵԿ ԳԵՎՈՐԳԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 15
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Նարեկ Գևորգի Հովհաննիսյանին Գյումրիի հիվանդ երեխաներին օգնելու նպատակով հատկացնել 100.000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Պարտավորեցնել Նարեկ Գևորգի Հովհաննիսյանին՝ ներկայացնելու սույն որոշման 1-ին կետում նշված գումարի ծախսերի վերաբերյալ հաշվետվություն:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 216 (ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՎԵՑ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 15
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թվով 216 (երկու հարյուր տասնվեց) անձանց կանխիկ տրամադրել 2.245.000 (երկու միլիոն երկու հարյուր քառասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 15
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Տալ համաձայնություն Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն աճուրդային կարգով օտարելուն և հաստատել հողամասերի օտարման աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ԽՃՈՒՂԻ N 1/9 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՇՈՏ ԵՎ ՀԱՍՄԻԿ ԻԼՈՅԱՆՆԵՐԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 15
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքի Ախուրյանի խճուղի N 1/9 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված, դրա նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված 4,66 (չորս ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով աստիճանները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 50,27 (հիսուն ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը 25 (քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրել տվյալ շինությունը կառուցած քաղաքացիներ Աշոտ և Հասմիկ Իլոյաններին:

2. Տարեկան վարձավճարի չափ սահմանել 120.000 (հարյուր քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 44/2 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 15
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն մետաղական ավտոտնակ տեղադրելու նպատակով, Գյումրի քաղաքի Միեր Մկրտչյան փողոցի N 44/2 հասցեի 08-001-0637-0046 կադաստրային ծածկագրով 19.8 (տասնինը ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով առանձնացված ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը մրցույթով 5 (հինգ) տարի ժամկետով կառուցապատման իրավունքով տրամադրելու առաջարկին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքով տրամադրման մրցույթի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 30.000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N 21-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 13
դեմ – 2 (Նարինե Մեսրոպյան, Վալերիկ Շիրինյան)
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 6-ի «Հայաստանի Հանրապետության Շրակի մարզի Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող Արևելյան շրջանցիկ ճանապարհ N 45/1 հասցեի անշարժ գույքը աճուրդային կարգով օտարելու և աճուրդի մեկնարկային գին հաստատելու մասին» N 21-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) Որոշման 2-րդ կետի «5.300.000 (հինգ միլիոն երեք հարյուր հազար)» թիվը և բառերը փոխարինել «4.000.000 (չորս միլիոն)» թվով և բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N 17-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 15
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 6-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Գյումրի քաղաքի Մովսես Խորենացու փողոց N 29/10 հասցեում ինքնակամ կառուցված աստիճանները և նրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասը վարձակալության տրամադրելու և վարձավճարի չափ սահմանելու մասին» N 17-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) վերնագրում, նախաբանում և որոշման 1-ին կետում «Մուրադյանին» բառը փոխարինել «Եղշադյանին» բառով,
2) որոշման 4-րդ կետում «Մուրադյանի» բառը փոխարինել «Եղշադյանի» բառով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 118-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 15
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի սեպտեմբերի 30-ի « Գյումրու N 6 նախակրթարանի շենքը «Առդա» բարեգործական հիմնադրամի օգտագործումից հետ վերցնելու և այն Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» N 118-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1) վերնագրում, որոշման 2-րդ կետում «արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությանը» բառերը փոխարինել «տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությանը»՝ բառերով,
2) որոշման 2-րդ կետում «հողամասը» բառից հետո լրացնել «99 (իննսունինը) տարի ժամկետով» թիվը և բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԳՅՈՒՄՐԻ-2 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՎԱՐՁԱԿԱԼԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 15
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն՝ Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում Գյումրի-2 սոցիալական ծառայությունների տարածքային բաժնի տեղակայման նպատակով վարձակալելու Գյումրի քաղաքի Շահինյան փողոց N 8 հասցեում գտնվող, քաղաքացիներ Մկրտիչ և Արմենուհի Հակոբյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող շինությունը (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական 2510889)՝ ամսական 56.000 (հիսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ վարձավճարով:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում Գյումրի-2 սոցիալական ծառայությունների տարածքային բաժնի պետ Էդվարդ Բաղրամյանին օրենքով սահմանված կարգով կնքել շինության վարձակալության պայմանագիր:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ «ԳԼԵՆԴԵԼ ՀԻԼԶ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 15
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն՝ Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող «Մուշ-2» թաղամաս 11-րդ փողոցի N 5 հասցեում գտնվող բնակելի շենքի (շինարարական հասցե՝ «Մուշ-2» թաղամաս 44 շենք) կառուցապատման, պահպանման և սպասարկման համար զբաղեցված 1464,0 (մեկ հազար չորս հարյուր վաթսունչորս) քառակուսի մետր մակերեսով հողամասը «Գլենդել Հիլզ» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող «Մուշ-2» թաղամաս N 4/9 հասցեի հողամասից առանձնացված 1755,0 (մեկ հազար յոթ հարյուր հիսունհինգ) քառակուսի մետր մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՓՈՂՈՑ N 55/10 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՅԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԱԶՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ N 18/11 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ

ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 15
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն՝ Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Խրիմյան Հայրիկի փողոց N 55/10 հասցեի 12,24 (տասներկու ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացի Հայկ Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող, Մազմանյան փողոց N 18/11 հասցեի 12,24 (տասներկու ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

15. ԲԱՐԵԿԱՐԳԵԼՈՒ ԵՎ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ <<ԱԳԱԹ>> ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐՈՎ ԿԱՆԱՆՑ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ

ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 15
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Բարեկարգելու և խաղահրապարակ կազմակերպելու նպատակով <<Ագաթ>> հատուկ կարիքներով կանանց կենտրոն հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման տրամադրել հողամաս՝ Գյումրի քաղաքի Բաղրամյան փողոցի հարևանությամբ:
2. Սահմանել, որ.

1) անհատույց օգտագործման տրամադրված հողամասի հատակագիծը տրամադրվում է Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի կողմից,

2) հողամասի բարեկարգման և խաղահրապարակի կազմակերպման նախագիծը պարտադիր համաձայնեցվելու է Գյումրի համայնքի ղեկավարի հետ,

3) հողամասի բարեկարգման և խաղահրապարակի կազմակերպման հետ կապված շինաշխատանքների պատվիրատու է հանդիսանում <<Ագաթ>> հատուկ կարիքներով կանանց կենտրոն հասարակական կազմակերպությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

16. ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 1.433.292 (ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔ ՀԱԶԱՐ ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆԵՐԿՈՒ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ

ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ՄԻՆԱՍՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ս.Մինասյանին:

Ս.Մինասյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 1 (Նարինե Մեսրոպյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սահմանել արտոնություն Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմին սեփականության իրավունքով պատկանող փոխադրամիջոցների գույքահարկի՝ 1.433.292 (մեկ միլիոն չորս հարյուր երեսուներեք հազար երկու հարյուր իննսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարման նկատմամբ՝ ազատելով 1.433.292 (մեկ միլիոն չորս հարյուր երեսուներեք հազար երկու հարյուր իննսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

17. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ռ. ՍԱՆՈՅԱՆ

ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 15
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հատկացնել 6.000.000 (վեց միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ Գյումրիում համաքաղաքային միջոցառումների կազմակերպման և անցկացման նպատակով՝ համաձայն նախահաշվի:

2.Թույլատրել անհրաժեշտ գնումները իրականացնել բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:

3.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել համապատասխանաբար Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4861) <<Այլ ծախսեր>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից 1.000.000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ և 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից 5.000.000 (հինգ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

18. «ԳՅՈՒՄՐԻՆ ՄԵՐ ՏՈՒՆՆ Է» ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՍԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ՍԱՆՈՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 15
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. «Գյումրին մեր տունն է» քաղաքացիական նախաձեռնության անդամ Արսեն Սամսոնի Վարդանյանին հեծանիվ ձեռք բերելու նպատակով հատկացնել 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Պարտավորեցնել Արսեն Սամսոնի Վարդանյանին՝ ներկայացնելու սույն որոշման 1-ին կետում նշված գումարի ծախսերի վերաբերյալ հաշվետվություն:
3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

19. ԱՐՏՅՈՄԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ՍԱՆՈՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 15
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Արտյոմիկ Ավետիսյանի մեկամյա որդու բուժման նպատակով հատկացնել 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 157-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 15
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող Թումանյան փողոց N 15 հասցեում գտնվող զինվորական կոմիսարիատի շենքը և դրա կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասը Գյումրի քաղաքի զինվորական կոմիսարիատին անհատույց (մշտական) օգտագործման տրամադրելու մասին» N 157-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) հանել՝

ա. վերնագրից «ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ» բառերը,

բ. որոշման 1-ին կետից «և դրա կառուցապատման և սպասարկման համար զբաղեցրած 0,222232 (զրո ամբողջ երկու հարյուր քսաներկու հազար երկու հարյուր տասներկու միլիոներորդական) հեկտար մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց